ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 51 - 52 (16650) ՇԱԲԱԹ, 30 ՀՈՒՆԻՍԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԱՅՍՈՒՀԵՏԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԳՈՐԾԻ ՏԱՍԸ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԿ ՊԵՏՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 26-ին, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, հատուկ հրավիրված մամլո ասուլիսում, ներկայացրեց կառավարության նոր կառուցվածքը:

Վրաստանի նոր կառավարությունում նախարարությունների թվաքանակը ներկայիս 13-ից կկրճատվի մինչեւ 10, ընդ որում՝ լինելու է մեկ պետնախարարություն: «Դա կլինի նախարարությունների այն օպտիմալ թվաքանակը, որը թույլ կտա արդյունավետորեն եւ օպերատիվորեն լուծել երկրում գոյություն ունեցող խնդիրները»,- ճեպասուլիսում հայտարարեց վարչապետ Մամուկա Բախտաձեն եւ հավելեց, որ կառավարության նոր կազմի անդամների հետ խորհրդատվություններն արդեն ավարտվել են: Վարչապետը նշեց, որ կառավարության նորացված կազմը խորհրդարանի հաստատմանը կներկայացվի սահմանադրորեն հաստատված ժամկետում:

«Խորհրդարանում դուք կտեսնեք կառավա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀՅՈՒՐԲՆԿԱԼԵՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ

Հունիսի 29-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Հավլաբարի նախագահական նստավայրում հանդիպում ունեցավ Եվրամիության անդամ երկրներում աշխատող երկու տասնյակ լրագրողների հետ, պատասխանեց նրանց հետաքրքրող հարցերին: Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպմանը խոսեց ՆԱՏՕ-ի առաջիկա գագաթաժողովի նախապատրաստության եւ ԱՄՆ Կոնգրեսի կողմից Վրաստանին ցուցաբերած աջակցության մասին, կոնգրեսականներին շնորհակալություն հայտնեց նման վերաբերմունքի համար: Հանդիպմանը լրագրողները նախագահին հարցեր առաջադրեցին երկրի ներքաղաքական գործընթացների, ինչպես նաեւ՝ Վրաստանի միջազգային եւ տարածաշրջանային քաղաքական կուրսի վերաբերյալ: Անդրադարձ կատարվեց նաեւ անվտանգության թեմային, մասնավորապես խոսեցին ռուսական քարոզարշավի դեմ պայքարի մեթոդների ու Եվրամիությանը եւ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցերի շուրջ:

ԵՌԱԿՈՂՄ ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՄՆ-ՈՒՄ

Հունիսի 26-ին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանական պատվիրակության հետ, այցով մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Այցն իրականացվում է Վրաստան-Մոլդովա-Ուկրաինա եռակողմ միջխորհրդարանական համագործակցության շրջանակներում:

Վրաստանի խորհրդարանի նախագահը, իր ուկրաինացի եւ մոլդովացի գործընկերներ՝ Անդրեյ Պարուբիի եւ Անդրիան Կանդույի հետ միասին, հանդիպում ունեցավ ԱՄՆ կոնգրեսի ներկայացուցիչների պալատի խոսնակ Պոլ Ռայանի, ԱՄՆ կոնգրեսում Վրաստանի, Մոլդովայի եւ Ուկրաինայի բարեկամների խմբի անդամների հետ:

Այցի շրջանակներում՝ Իրակլի Կոբախիձեն մասնակցեց արտաքին քաղաքականության հարցերով ամերիկյան խորհրդի եւ Ատլանտյան խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումներին:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

«ԱՐՏԱԴՐԻ'Ր ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է

Հունիսի 25-ին, Բաթումիում, անցկացվեց ձեռներեցական մարկետ, որին ներկա էին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, էկոնոմիկայի նախարար Գիորգի Չերքեզիշվիլին եւ Աջարիայի կառավարության ղեկավար Զուրաբ Պատարաձեն: Մարկետին, որպես պատվավոր հյուր, ներկա էր «Արտադրի'ր Վրաստանում» գործակալության ղեկավար Միխեիլ Խիդուրելին:

Ձեռներեցական մարկետում ներկայացվեցին «Արտադրի'ր Վրաստանում» ծրագրի մասնակից ձեռներեցների թողարկած արտադրանքները:

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն ձեռներեցական մարկետում հայտարարեց, որ երկրի նոր կառավարությունն իր գործունեության ծրագիրը մշակել է՝ ելնելով առկա մարտահրավերներից: Մամուկա Բախտաձեի խոսքով, Վրաստանում այ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՍԻՐՈՎ ՀԱՐՎԻՐՈՒՄ ԵՄ ՁԵԶ ՀԱՅԱՍՏԱՆ»

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Մամուկա Բախտաձեին՝ Վրաստանի վարչապետի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:

Ն.Փաշինյանի շնորհավորական ուղերձում, մասնավորապես, ասված է. «Սրտանց շնորհավորում եմ Ձեզ Վրաստանի վարչապետի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Մեր ժողովուրդները դարերի ընթացքում մշտապես միահյուսված են եղել բարեկամական, եղբայրական ամուր ու բազմաբնույթ թելերով, որոնք այսօր էլ շարունակում են բազմապատկվել ու զարգանալ՝ շնորհիվ այն ջերմության եւ փոխվստահության մթնոլորտի, որը տիրում է մեր երկու պետությունների ու ժողովուրդների միջեւ:

Բոլորովին վերջերս, Վրաստան կատարած իմ պաշտոնական այցի եւ արդյունավետ հանդիպումների ընթացքում, մեկ անգամ եւս համոզվեցի, որ հայ-վրացական հարաբերություններում առկա է մեծ ներուժ: Համոզված եմ, որ Ձեր պաշտոնավարման շրջանում Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ առկա փոխշահավետ համագործակցությունը կշարունակվի զարգանալ ու ամրապնդվել՝ ի բարօրություն մեր ժողովուրդների:

Սիրով հրավիրում եմ Ձեզ Հայաստան: Համոզված եմ, որ այդ այցելությունը նոր լիցք կհաղորդի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տարբեր բնագավառներում մեր երկրների փոխգործակցությանը:

Օգտվելով առիթից, մաղթում եմ Ձեզ հաջողություն՝ բարեփոխումների իրագործման նոր փուլում, եւ հավաստիացնում, որ Վրաստանի ցանկացած հաջողություն մենք ընդունում ենք որպես մերը»:

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հունիսի 25-ին կայացավ Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի եւ Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանու հեռախոսազրույցը:

Շնորհավորելով գործընկերոջը, բարեկամ Վրաստանի ԱԳ նախարարի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ, Զոհրաբ Մնացականյանը հաջողություն մաղթեց Դավիթ Զալկալիանուն իր կարեւոր առաքելությունում եւ վերահաստատեց հայկական կողմի պատրաստակամությունը՝ շարունակելու համատեղ աշխատանքը երկկողմ համագործակցությունն առավել խորացնելու ուղղությամբ:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԱՎԻԹ ԶԱԼԿԱՆԻԱՆԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆԻՆ

Հունիսի 28-ին, Վրաստանի արտաքին գործերի նորանշանակ նախարար Դավիթ Զալկալիանին հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:

Շնորհավորելով Վրաստանի արտգործնախարարին պաշտոնի ստանձնման առիթով՝ Ռուբեն Սադոյանը հաջողություններ մաղթեց, եւ հույս հայտնեց, որ նրա պաշտոնավարման ընթացքում հայ-վրացական բարեկամական հարաբերություններն առավել կխորանան:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների օրակարգային հարցերի լայն շրջանակ, անդրադարձան բարձր մակարդակի փոխայցելություններին, երկկողմ առեւտրատնտեսական հարաբերություններին, զբոսաշրջությանը վերաբերող եւ այլ հարցերին:

Ռուբեն Սադոյանը նախարա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ության նոր կազմն ու նրանում ներկայացվող ազգանունները՝ համապատասխան ծրագրերով»,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն եւ հավելեց. «Մենք չենք ծրագրում կառավարական նոր ինստիտուտի ձեւավորում: Կլինեն փոխնախարարներ, ովքեր պատասխանատու կլինեն համապատասխան ոլորտների զարգացման համար»: Մամուկա Բախտաձեի խոսքով, մշակվել է փոքր կառավարության հիմնադրույթը, որը կլինի առավելագույնս ճկուն ու օպերատիվ իր որոշումներում: Անդրադառնալով նոր կառավարության կառուցվածքի մանրամասներին, վարչապետը նշեց, որ մշակույթի եւ սպորտի նախարարությունը կմիացվեն կրթության եւ գիտության նախարարությանը, իսկ քրեա-կատարողական եւ պրոբացիայի նախարարությունը, ինչպես նախկինում, կդառնա արդարադատության նախարարության բաղկացուցիչ մասը: Կվերացվի Վրաստանի բռնազավթված տարածքներից բռնագաղթվածների, փախստականների եւ վերաբնակեցման հարցերով նախարարությունը: Վերաբնակեցման գործառույթը կվերապահվի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարությանը, արտագաղթի գործառույթը կփոխանցվի ներքին գործերի նախարարությանը, իսկ սոցիալական քաղաքականությունը կներառվի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության գործառույթում: Տարածքային կարգավորման բաղադրիչը եւս կհանձնվի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարությանը: Կրոնի հարցերով գործակալությունը կմիացվի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի աշխատակազմին:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

«ՀՈՂԻ ՆՈՐ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՆ»

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, Զուգդիդիում բնակչության հետ հանդիպմանը հայտարարեց, որ, գյուղատնտեսության ոլորտում առկա ներուժի լիարժեք կիրարկման համար, անհրաժեշտ է իրականացնել հողի նոր բարեփոխում:

- Գլխավոր կետերից մեկը, որն ընդգրկված է իմ ծրագրում եւ հուլիսին կստանա օրենքի տեսք, վերաբերում է հարկային պարտքերին, որոնք ծագել են ընկերությունների գործունեության դադարեցման արդյունքում: 2013 թվականի հունվարի 1-ի վիճակով, վերջիններս լրիվությամբ կմարվեն: Թեպետ, դա բավարար չէ եւ մեզ անհրաժեշտ է նոր բարեփոխում, որը հնարավորություն կընձեռի մեզ՝ անցնելու տնտեսապես արդյունավետ գործունեության: Ցավոք, այսօր գյուղատնտեսությունը մեծ մասամբ մնում է բնամթերային: Իսկ երբ երկրի համար նշանակալից գյուղատնտեսական ոլորտում, ուր գործում է երկրի աշխատունակ բնակչության 50 տոկոսից ավելին, գերակայում է բնամթերայինը, նշանակում է, որ դա չի կարող ծառայել աղքատության հաղթահարմանը եւ ակնհայտ է, որ այդ ոլորտում պետք է իրականացվեն հիմնարար բարեփոխումներ:

ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

Օրենքի ժամկետը, որի հիման վրա իրականացվում է հողամասերի սեփականության գրանցումը, երկարաձգված է մինչեւ 2019 թվականի հունվարի 1-ը:

Խոսքը վերաբերում է «Պետական նախագծի շրջանակներում հողամասի նկատմամբ իրավունքների գրանցման հատուկ կարգի եւ կադաստրային տվյալների լիարժեքության մասին» օրենքին, որը գործում է մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը: Խորհրդարանը պատրաստ է վերոնշյալ ժամկետը երկարաձգել՝ մինչեւ 2019 թվականի հունվարի 1-ը:

Օրենքի համաձայն, հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման ընթացակարգը դյուրացվել է, վերացվել են այն բյուրոկրատական եւ ֆինանսական արգելքները, որոնք առաջանում էին հողի սեփականության գրանցման ընթացքում:

Ինչպես նշված է օրինանախագծի բացատրական թերթիկում, հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահանջով, հանրային ռեեստրի ազգային գործակալություն օրեկան ներկայացվում է 1500-ից մինչեւ 2000 հայտ, առանձին օրերին գրանցվել է ավելի քան 5000 հայտ:

«Ներկա դրությամբ, գործակալությունում ընթացքի մեջ է 105712 հայտի քննարկումը: Հայտերի մի մասը, մասնավորապես 23394-ը, սեփականության իրավունքի ճանաչման հարցով, ստուգման համար առաքվել է համապատասխան մունիցիպալիտետների գործադիր մարմիններին առընթեր գործող ինքնակամ զբաղեցրած հողամասերի սեփականության իրավունքի ճանաչման հանձնաժողովներին: Օրենքի գործողության ժամկետի երկարաձգումը նշանակալից է ընթացիկ հայտերի քննարկման տեսանկյունից, նաեւ՝ շահագրգռված անձանց բարձր հետաքրքրության պատճառով»,- ասված է բացատրական թերթիկում:

Նշենք, որ հողերի սեփականության իրավունքի գրանցման հարցով բարեփոխման մեկնարկից մինչեւ 2018 թվականի հունիսի 15-ն արդեն գրանցվել է ավելի քան 486100 հողամաս:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ



ԹՈՒՐՔԻԱ

ԷՐԴՈՂԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

Հունիսի 24-ի Թուրքիայի արտահերթ նախագահական ընտրություններում երկրի նախագահի պաշտոնում է վերընտրվել «Արդարություն եւ զարգացում» կուսակցության (ԱԶԿ) առաջնորդ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Գործող նախագահն ընտրություններում ստացել է ձայների 52.5 տոկոսը:

Խորհրդարանական ընտրությունների արդյունքում՝ 600 պատգամավորական մանդատ ունեցող խորհրդարանում ԱԶԿ-ն ստացել է 293 պատգամավորական մանդատ, ՀԺԿ-ն՝ 146, ԺՈԿ-ն՝ 67, «Ազգայնական շարժում» կուսակցությունը՝ 50, «Լավ» կուսակցությունը՝ 44:

Թուրքիայի խորհրդարանը երկու հայ պատգամավոր կունենա՝ քրդամետ Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության կողմից Կարո Փայլանը եւ իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության կողմից Մարգար Եսայանը:

ԿՈՐԵԱ

ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ

Հյուսիսային եւ Հարավային Կորեաների ռազմական պատվիրակությունների հանդիպման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն Հյուսիսային եւ Հարավային Կորեաների միջեւ ռազմական միության վերականգնման մասին: Դրա նպատակն է՝ կանխել երկու Կորեաների միջեւ սահմանային դիմակայությունները:

ՎԱՏԻԿԱՆ

ՀՌՈՄԻ ՊԱՊԸ ՔՆՆԱԴԱՏԵՑ ԹՐԱՄՓԻՆ

Հռոմի Պապ Ֆրանցիսկ Առաջինը պաշտպանեց ամերիկյան եպիսկոպոսներին, ովքեր համաձայն չեն ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ներգաղթման քաղաքականության հետ եւ քննադատում են այն: Նրանք հայտարարել են, որ ծնողներից երեխաների բաժանումը հակադրվում է կաթոլիկ եկեղեցու հիմնադրույթներին եւ անբարոյական է: Հռոմի Պապը գտնում է, որ «պոպուլիզմը» հիմնախնդրի լուծում չէ: «Դա դյուրին չէ, թեպետ պոպուլիզմը հարցի կարգավորում չէ»,- հայտարարեց Հռոմի Պապը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների եւ շնորհավորանքի համար՝ Վրաստանի նորանշանակ արտգործնախարարը նշել է, որ բարձր է գնահատում այն հարաբերությունները, որոնք պատմականորեն ձեւավորվել են երկու ժողովուրդների եւ պետությունների միջեւ:

Անդրադառնալով Հայաստանի վարչապետի՝ Վրաստան կատարած պաշտոնական այցելությանը՝ կողմերն ընդգծեցին, որ այցը եւ դրա ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններն ամուր հիմք են ստեղծում երկկողմ հարաբերությունների առավել ամրապնդման եւ ընդլայնման համար:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով համագործակցության շուրջ:

ԴԱՎԻԹ ՁԱԼԿԱԼԻԱՆԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ին ներկայացրեց այս տարի Երեւանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթաժողովի վերաբերյալ մանրամասներ: Ի պատասխան, Դավիթ Ձալկալիանին նշեց, որ Վրաստանն այդ մեծածավալ միջոցառմանը ներկայացված կլինի բարձր մակարդակով:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին վրաց-հայկական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ՝ խոսելով այն քայլերի մասին, որոնք հնարավորություն կտան մոտ ապագայում կազմակերպել հանձնաժողովի նիստը:

Դավիթ Ձալկալիանին գոհունակությամբ փաստեց վերջին տարիներին Վրաստանում հայաստանցի զբոսաշրջիկների եւ այցելուների թվի աճը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂԵՐ

Հունիսի 27-ին, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանն այցելեց Վրաստանի Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Մառնեուլիի մունիցիպալիտետի Աղքյորփի, Խոխմել, Չանախչի, Խոժոռնի, Գյուլիբաղ, Ծոփ, Դամիա, Շահումյան, Կարմիր գյուղ, Միրզոեւկա գյուղերը:

Հայաստանի դեսպանին ուղեկցում էին Մառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Ամիրան Գիորգաձեն եւ Մառնեուլիի քաղաքապետի պաշտոնակատար Զաուր Տաբատաձեն:

Գյուղերում դեսպանն ու ուղեկցորդները հանդիպում ունեցան տեղի բնակիչների հետ, խոսեցին նրանց հուզող հիմնախնդիրների, մասնավորապես՝ ճանապարհների անբարեկարգության, ջրամատակարարման, գազիֆիկացման, կրթօջախների կարիքների մասին:

Մունիցիպալիտետի Շահումյան ավանում, Դամիա, Կարմիր գյուղ, Միրզոեւկա գյուղերում դեսպանն այցելեց տեղի դպրոցներ, եկեղեցի, հանդիպում ունեցավ բնակիչների հետ:

Հարցուպատասխանի կարգով անցկացված հանդիպմանը, Ռուբեն Սադոյանը տեղացիներին վստահեցրեց, որ հնարավորինս բնակչությանը հուզող հիմնախնդիրների մասին կհաղորդի երկրի իշխանություններին եւ, որ նմանատիպ այցերը կրելու են պարբերական բնույթ:

Այցի շրջանակներում՝ գյուղերի դպրոցներին նվիրաբերվեցին գեղարվեստական գրականություն, իսկ աշակերտներին՝ գրենական պիտույքներ:

Ռուբեն Սադոյանը Աղքյորփիում

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿԸՀ

39 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընթացիկ տարվա աշնանը կայանալիք նախագահական ընտրություններում պետությունը ծախսելու է 39 միլիոն լարի: Այս մասին հայտարարեց Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան:

ԿԸՀ ղեկավարի խոսքով, վերոնշյալ գումարը ծախսվելու է ընտրական վարչակազմի տարածքային հանձնաժողովների եւ քաղաքական ներկայացուցիչների ու հեռուստատեսային գովազդի ծախսերի վրա: Այն նախատեսում է նաեւ ընտրական վարչակազմի կողմից տարբեր ապրանքների եւ սպասարկումների ձեռքբերումը:

Հիշեցնենք, որ Վրաստանում այս աշնանը կայանալիք նախագահական ընտրություններին, մինչ այդ երկրի սահմանադրությունում իրականացված փոփոխությունների համաձայն, վերջին անգամ երկրի քաղաքացիները կընտրեն պետության ղեկավարին ուղղակի քվեարկության ճանապարհով: Նախագահն ընտրվում է վեց տարի ժամկետով: Այս ժամկետի ավարտվելու հետ՝ Վրաստանը վերջնականապես կդառնա խորհրդարանական պետություն, իսկ նախագահական ընտրությունները կիրականացնեն հատուկ ընտրողները:

Ավելացնենք, որ 2017 թվականին Վրաստանի պետական բյուջեից 39 մլն լարի հատկացվել է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման համար: Իսկ 2016 թվականի խորհրդարանական ընտրությունների համար՝ Վրաստանի բյուջեն նախատեսել էր 34 371 400 լարի:



42,25 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Արժույթի միջազգային հիմնադրամը աջակցում է, որ Վրաստանին տրամադրվի 42.25 միլիոն դոլար:

Կազմակերպության կողմից հրապարակված մամլո հաղորդագրության համաձայն, Հիմնադրամի գործադիր տնօրենների խորհուրդը հաստատել է «Ընդլայնված ֆինանսավորման մեխանիզմի» աջակցված Վրաստանի երեքամյա ծրագրի երկրորդ վերանայումը:

Այս ծրագիրը մեկնարկել է 2017 թվականի ապրիլի 12-ին եւ նախատեսում է ընդհանուր 210,4 միլիոն դոլարի հատուկ փոխառության իրավունք, մոտավորապես 285 միլիոն դոլարի փոխանցում: Ծրագրի նպատակն է՝ աջակցել կառավարության տնտեսական բարեփոխումներին:

Ծրագրով նախատեսված մնացած վճարումները կկատարվեն հաջորդ չորս վերանայման հաջող ավարտի դեպքում, որը կանցկացվի տարին երկու անգամ:

ԿԵՂԾ ԱՆՁՆԱԳՐԵՐ՝ 100 ԵՎՐՈՅՈՎ

Ինչպես տեղեկացրել են Կիպրոսի լրատվամիջոցները, այստեղ ծերբակալվել է չորս վրացի կին, որոնց մոտ հայտնաբերվել են կեղծ անձնագրեր: Իրավապահների տեղեկատվությամբ, այդ կանայք կեղծ փաստաթղթերը Վրաստանում ձեռք էին բերել 100-ական եվրոյով: Կանանց սահմանվել է երկօրյա ծերբակալություն, քանի որ նրանք Կիպրոսի տարածքում հայտնաբերվել էին անօրինականորեն:

ՀԱՎԼԱԲԱՐՈՒՄ ԵՐԿՈՒ ՏՈՒՆ Է ՔԱՆԴՎԵԼ

Թբիլիսիի Հավլաբարի թաղամասում Փերիսցվալեբա փողոցում քանդվել է բնակելի տուն: Ինչպես ասացին տեղացիները, տունը վթարային էր: Տեղացիների խոսքով, վերջին շաբաթվա ընթացքում սա թաղամասում քանդված երկրորդ տունն է: Բարեբախտաբար, զոհեր եւ վնասվածք ստացածներ չկան:

ՍՊԱՍՎՈՒՄ Է ՕԴԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Բնապահպանության ազգային գործակալությունը բնակչությանը զգուշացնում է առաջիկա օրերին օդի ջերմաստիճանի նշանակալի բարձրացման կապակցությամբ: Մասնավորապես, ինչպես տեղեկացրել է գործակալությունը, հուլիսի 28-ին Արեւմտյան Վրաստանում օդի առավելագույն ջերմաստիճանը հասել է 41-ի, Արեւելյան Վրաստանում նույնպես գրանցվել է 40 աստիճան տաքություն:

Ջերմաստիճանի նշանակալի բարձրացում է կանխագծվում նաեւ Թբիլիսիում:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 7,5 ՏՈԿՈՍ



Մայիսին երկրի տնտեսությունն ավելացել է 7,5%-ով,- այս մասին տեղեկություն է տարածել Վրաստանի վիճակագրական ազգային ծառայությունը:

«Նախնական գնահատմամբ, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, 2018 թվականի մայիսին համախառն ներքին արդյունքի իրական աճը կազմել է 7,5 տոկոս, իսկ 2018 թվականի առաջին հինգ ամսվա իրական միջին աճը կազմել է 6,1 տոկոս:

Նախնական գնահատմամբ, 2018 թվականի մայիսին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, զգալի աճ է նկատվել տրանսպորտի, վերամշակող արդյունաբերության, առեւտրի, ֆինանսական գործունեության, հյուրանոցների եւ ռեստորանների բնագավառներում»,- նշված է Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տեղեկությունում:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՃԱՎԱԼՆ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

ԱՄՆ-ը մեծացնում է Վրաստանի եւ Ուկրաինայի ռազմական օգնությունը: Այս մասին հայտարարեց ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ուես Միտչելը՝ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում իր ելույթի ժամանակ:

Նրա խոսքով, այս ճանապարհով ԱՄՆ Վրաստանին եւ Ուկրաինային օգնում է, որ նրանք կարողանան հակամարտել Ռուսաստանի դեմ:

«Մենք օգնում ենք Վրաստանին եւ Ուկրաինային, որոնց Ռուսաստանը սպառնում էր ուժ գործադրել: Այս երկրների համար մեծացնում ենք ռազմական միջոցների մատակարարումը, ինչը կարեւոր է նրանց ինքնապաշտպանության համար»,- ասաց Ուես Միտչելը:

Նա խոսեց նաեւ Թրամփի վարչակազմի կողմից Եվրոպային տրամադրված օգնության մասին: Նրա խոսքով, նախագահ Թրամփը Եվրոպայի անվտանգության պաշտպանության խոստումը տվել է 2017 թվականին՝ Վարշավա կատարած այցի ժամանակ:

«Մենք ռազմական օգնություն ենք ցուցաբերում Ուկրաինային, Վրաստանին, Մոլդովային, Բալթյան երկրներին եւ եվրոպական այլ պետություններին: 2018-2019 թվականներին Թրամփի ղեկավարությունը պահանջում է 11 միլիարդ դոլար, որը պետք է ծախսվի եվրոպական անվտանգության ամրապնդման վրա» - ընդգծել է Պետական քարտուղարի օգնականը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՕԹԽՈԶՈՐԻԱ-ՏԱՏՈՒՆԱՇՎԻԼՈՒ ՑՈՒՑԱԿՈՒՄ 33 ԱՆՁ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, հատուկ հրավիրված մամլո ասուլիսում, հայտարարեց, որ Օթխոզորիա-Տատունաշվիլու ցուցակում ներառված է 33 անձ, այն կասկածյալ եւ մեղադրյալ անձինք, ովքեր մասնակցել են այս ծանրագույն հանցագործությանը: «Այս ցուցակում ներառված են կասկածյալներն ու մեղադրյալները, ովքեր մասնակցել են բռնազավթված տարածքներում Վրաստանի քաղաքացիների նկատմամբ ցուցաբերած այնպիսի հանցագործությունների կապակցությամբ, ինչպիսիք են սպանությունը, առեւանգումը, կտտանքների ենթարկելը, ինչպես նաեւ վերոնշյալ հանցագործությունների քողարկումը: Այս ցուցակում դեռեւս ներկայացվել է 33 անձ, ովքեր 1991 թվականից մինչ օրս Վրաստանի բռնազավթված տարածքներում վրաստանի քաղաքացիների նկատմամբ հանցագործություն են կատարել: Ներկայացված ցուցակը սպառված չէ, քանի որ իրավապահ մարմինները շարունակում են հետաքննությունը, եւ այդ ցուցակը, ամենայն հավանականությամբ, առավել կընդլայնվի»,- ընդգծեց վարչապետը:

Հիշեցնենք, որ 2018 թվականի փետրվարի 22-ին, Ախալգորիի շրջանի մոտ, բռնազավթված Ցխինվալիի շրջանի «իրավապահ մարմնի» աշխատակիցների կողմից, ապօրինի ձերբակալվել էին Արչիլ Տատունաշվիլին, Իոսեբ Պավլիաշվիլին եւ Լեւան Քուտաշվիլին: 2008 թվականի օգոստոսի պատերազմին մասնակցելու համար, Արչիլ Տատունաշվիլին կտտանքների էր ենթարկվել, դրանից էլ մահացել էր, իսկ Իոսեբ Պավլիաշվիլին եւ Լեւան Քուտաշվիլին ազատ էին արձակվել:

Ինչ վերաբերում է Գիգա Օթխոզորիային, ապա նա սպանվել էր Խուրչայում, 2016 թվականի մայիսի 10-ին:

Հիշեցնենք, որ Օթխոզորիա-Տատունաշվիլի ցուցակը ներկայացվել է միջնազգային իրավական մարմիններին՝ ցուցակում ներգրավված անձանց նկատմամբ համապատասխան միջոցների իրականացման համար:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՇՈՄՈՍԱՎԼԵԳԻՍ ՍԱՄՍԱԽՈՒՐԻ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԴԱՐՁԱՆ IOTA-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը երկրորդ անգամ ընտրվեց հարկային վարչակազմերի ներեվրոպական կազմակերպության (IOTA) գործադիր խորհրդի անդամ: Համապատասխան որոշումն ընդունվեց Բրատիսլավայում հունիսի 25-27-ին անցկացված IOTA-ի 22-րդ գլխավոր համաժողովին:

Երկրորդ ժամկետով հարկային վարչակազմերի ներեվրոպական կազմակերպության գործադիր խորհրդում Վրաստանի եկամուտների ծառայության ընտրությունը կրկին անգամ հաստատեց ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունավետությունը:

Նշենք, որ կազմակերպությունը հիմնվել է 1996 թվականին եւ դրանում միավորված է Եվրոպայի տարածաշրջանների հարկային 44 վարչակազմ: IOTA-ն իրենից ներկայացնում է գործնական համագործակցության նշանակալի հարթակ: Հարկային վարչակազմերի ներեվրոպական կազմակերպության գործադիր խորհուրդը կազմված է կազմակերպության նախագահ երկրից, ինչպես նաեւ ութ անդամների վարչակազմերի ներկայացուցիչներից: Խորհրդի անդամակցությունը հիանալի միջոց է միջազգային հարկային օրենսգրքով նախատեսված նշանակալի նախագծերի առաջմղման եւ իրականացման տեսանկյունից:



ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

«ԱՐՏԱԴՐԻ'Ր ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)



սօր վավերացվել է տնտեսական նշանակալի աճ, թեպետ դրանում բացակայում է անմիջական ազդեցության բաղադրիչը, քանի որ բնակչության մեծ մասի համար այն դեռեւս աննշմարելի է: «Մենք խորհրդարանին ներկայացրել ենք բարեփոխումների բավական հավակնոդ փաթեթ, որտեղ առավելագույնս հաշվի ենք առել այսօրվա մարտահրավերները եւ բնակչության լայն զանգվածներին ընդգրկելու հնարավորությունը: Դա նշանակալից պայման է, որպեսզի հստակ քաղաքականություն իրականացվի»,- ընդգծեց վարչապետը:

Հանդես գալով մարկետին, Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Չերքեզիշվիլին հայտարարեց, որ, «Արտադրի'ր Վրաստանում» պետական ծրագրի շրջանակներում, ֆինանսավորվել է շուրջ 400 նախագիծ: Դրանց ընդհանուր ֆինանսավորումը կազմել է ավելի քան 900 միլիոն լարի: Իրականացված նախագծերի արդյունքում, ստեղծվել է ավելի քան 15 հազար աշխատատեղ: Նախարարի խոսքով, միկրոգործարարության ուղղությամբ ներկայումս ֆինանսավորման պահանջով դիմել է 14 հազար ձեռներեց: Նախարարի հավաստմամբ, ներկայումս աշխատանքներ են տարվում «Արտադրի'ր Վրաստանում» ծրագրի տարածման ոլորտի ընդլայնման ուղղությամբ:

Նրա խոսքով, հմուտ ժամանակներում «Արտադրի'ր Վրաստանում» բիզնեսին աջակցության պետական ծրագիրը կներառի նոր բիզնես գաղափարներ:

Երկրի մաշստաբով վերոնշյալ պետական ծրագիրն իրականացնող «Ձեռներեցության զարգացման գործակալությունը» Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության իրավասության ներքո կազմավորվել է 2014 թվականին եւ կողմնորոշված է Վրաստանում փոքր եւ միջին բիզնեսի զարգացման աջակցմանը, միկրո ձեռներեցության ակտիվացմանը: Գործակալության գործունեության հիմնական ուղղություններն են փոքր եւ միջին բիզնեսի աջակցման տարբեր մեխանիզմների ստեղծումը, արտահանման ներուժի լիարժեք օգտագործման նպաստումը եւ նոր, արդեն 2017 թվականին մշակված Վրաստանում միջազգային եւ օտարերկրյա ներդրումների ներգրավվածության աջակցության մեխանիզմի կիրարկումը:

Ինչպես նշեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության միկրոէկոնոմիկայի ոլորտում գործարարների աջակցության դեպարտամենտի ղեկավար Օթար Անթիան, գլխավոր խնդիրը, մասնավոր հատվածի համար, ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովումն է: «Այդ պարագայում մենք փոքր եւ միջին ձեռներեցներին տրամադրում ենք համաֆինանսավորման տոկոսադրույքներ, նաեւ՝ 5000 լարիի չափով գրավադրված, նվազ տոկոսադրույքով վարկեր: Նման պայմաններում, եթե անգամ վարկի ստացման խնդրանքով դիմում են կոմերցիոն բանկերին եւ, եթե փոքր կամ միջին ձեռնարկության արտադրանքը ներառված է մեր առաջնահերթություններում ցուցակում, ապա ձեռներեցը դառնում է «Արտադրի'ր Վրաստանում» ծրագրի մասնակից»,- ասաց նա:

Նրա խոսքով, «Արտադրի'ր Վրաստանում» պետական դրամաշնորհային ծրագիրը 2015 թվականից ակտիվորեն գործում է նաեւ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում: Ներկա դրությամբ, ծրագրի հնարավորություններից երկրամասում օգտվում է շուրջ 500 ձեռներեց, ովքեր դրամաշնորհի կարգով ստացել են 5 հազարից մինչեւ 15 հազարի վարկ:

Ավելացնենք, որ պետական այդ ծրագիրը, ֆինանսական աջակցությունից բացի, նախատեսում է տեխնիկական օգնություն, անվճար խորհրդատվություններ եւ վարժանքներ:

Անդրադառնալով պետական ծրագրի ընդլայնման թեմային, Օթար Անթիան նշեց, որ ընթացիկ տարվա համար ծրագրային չափորոշիչները որոշակիորեն փոխվել են: «Այսպես, եթե մինչ այդ տրվող գումարը կազմում էր 5 հազարից մինչեւ 15 հազար, ապա, այժմ այն հասցվել է 20 հազարի»,- ասաց դեպարտամենտի ղեկավարը եւ հավելեց, որ այս ծրագիրը կմեկնարկի հունիսի վերջին ու կշարունակվի մինչ հուլիսի 15-ը:

Ավելացնենք, որ, «Արտադրի'ր Վրաստանում» պետական ծրագրով համաֆինանսավորում ստանալու համար, փոքր եւ միջին ձեռներեցները նախ մասնակցելու են բիզնես-գաղափարների մրցույթին, բիզնես ծրագրերը ներկայացնելու են հատուկ հանձնաժողովին:

Բիզնես-գաղափարների մրցույթին կարող է մասնակցել Վրաստանի ցանկացած չափահաս, պետական ծառայության մեջ չգտնվող ու հարկային պարտքեր չունեցող քաղաքացի, ով ցանկանում է սկսել կամ զարգացնել միկրո եւ փոքր ձեռներեցությունը:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵԾ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հունիսի 25-ին, ժողովրդական պաշտպան Նինո Լումջարիան հանրագումարեց հանրակրթական դպրոցներում մարդու իրավունքների ակադեմիայի կողմից անցկացված հարցման արդյունքները:

Ժողովրդական պաշտպանի խոսքով՝ հարցին, թե որքան հաճախ են լսել կամ ականատես եղել մյուս աշակերտների նկատմամբ բռնության փաստերին, հարցման ենթարկված աշակերտների 32,2 տոկոսը հայտարարել է, որ երբեմն իմացել են այդ մասին, իսկ 15,2 տոկոսը նշել է, որ հաճախ լսել ու տեսել են: 40,7 տոկոսի խոսքով, իրենք երբեմն տեղեկացել են հասակակիցներին բառացի վիրավորանք հասցնելու դեպքերի մասին, իսկ 25,1 տոկոսի հավաստմամբ, նման դեպքերի մասին հաճախ են լսել:

Որպես աշակերտների վրա ճնշման պատճառ, բոլորից հաճախ նշվել է ռասայական, ազգային, կրոնական պատկանելությունը կամ սեռական կողմնորոշումը, սահմանափակ հնարավորությունները եւ սոցիալական կարգավիճակը:

Հարցման արդյունքներով, 5 բալի շրջանակներում, դպրոցներում անվտանգության միջավայրի գնահատման միջին ցուցանիշը կազմել է 3,6 բալ:

Հարցման ենթարկվածների 30-31 տոկոսի հավաստմամբ, դպրոցներում հաճախ են լինում բառացի վիրավորանքի փաստեր, իսկ 16-17 տոկոսը դրան ավելացրել է նաեւ՝ ֆիզիկական բռնությունը: Առանձնակի է նշվել նաեւ վանդալիզմի առկայությունը:

Նշենք, որ մարդու իրավունքների ակադեմիան հարցում է անցկացրել երկրի մասշտաբով 64 հանրային եւ մասնավոր դպրոցներում: Հարցման են ենթարկվել երեք նպատակային խմբերի ներկայացուցիչներ՝ 7-10-րդ դասարանի աշակերտներ, մանկավարժներ եւ դպրոցի տնօրինությունը: Ընդհանուր առմամբ, հարցման է ենթարկվել 1480 մարդ:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է



2006 թվականի ապրիլի 1-ից մինչեւ 2014 թվականի մարտի 1-ը տրված «C», «CE», «D», «DE», «C1», «C1E», «D1», «D1E» կարգի վարորդական վկայականներն իրավաբանական ուժը պահպանում են մինչեւ 2019 թվականի մարտի 1-ը: «Ճանապարհային երթեւեկության մասին» օրենքով այդ կարգի վարորդական վկայականների իրավական ուժը սահմանված էր մինչեւ 2018 թվականի սեպտեմբերի 1-ը, սակայն խորհրդարանը պատրաստ է նորացնել օրինանախագիծը, որը նախատեսում է ժամկետի երկարաձգում՝ մինչեւ 2019 թվականի մարտի 1-ը:

Ինչպես նշված է օրինանախագծի բացատրական թերթիկում, ներկա դրությամբ, տրված է 481 հազար վերոնշյալ կարգի վարորդական վկայական: «Դրանցից 263700-ի ժամկետը սպառվում է 2018 թվականի սեպտեմբերի 1-ին: Ելնելով նրանից, որ մինչեւ 2018 թվականի սեպտեմբերի 1-ը մնացել է մոտ երեք ամիս, նման քանակության վարորդական վկայականներ փոխել անհնարին է, քանզի սպասարկումների գործակալությունն իր ռեսուրսներով, աշխատանքային մեկ օրվա ընթացքում, իրավասու է առավելագույնս փոխել 2800 վարորդական վկայական: Իսկ «Ճանապարհային երթեւեկության մասին» օրենքի համաձայն, իրավասության ժամկետը սպառած վարորդական վկայականով անձնավորությունը՝ մինչեւ դրա նորացումը, տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունի»,-նշված է բացատրական թերթիկում:

ԱՋԱՂԵԿ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի էկոնոմիկայի նախարարությունը, աջաղեկ մեքենաները պարբերական տեխստուգում կանցնեն այնպես, ինչպես մյուս տեսակի ավտոտրանսպորտային միջոցները:

Նախարարության տեղեկատվությամբ, հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ աջաղեկ մեքենաները, որոնք առաջնային գրանցում են անցել 2018 թվականի հունվարի 1-ից, ղեկային համակարգի փոփոխման դեպքում (աջից՝ ձախ ղեկի տեղափոխման դեպքում) պարբերական տեխստուգում անցնել չեն կարողանա:

Վերոնշյալ տեխստուգման անցկացման գործընթացի եւ պայմանների մասին մանրամասն տեղեկություն հնարավոր է ստանալ 1484 թեժ գծով:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ ԿԱՐԵԼԻ Է ՎԱՎԵՐԱՑՆԵԼ ԲՋՋԱՅԻՆՈՎ

Քաղաքացիներին իրավունք է վերապահվում ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումը վավերացնել բջջային հեռախոսներով: Սույն նախաձեռնությամբ, հանդես է եկել Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, թեպետ այդ կարգի կիրարկման ամսաթիվը դեռեւս չի հստակեցվել:

Հունիսի 26-ին, ճանապարհային անվտանգության թեմայով, խորհրդարանում անցկացված հանդիպմանը նշվեց, որ քաղաքացիները կարող են ավտոմատ կարգով առաքել ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման տեսագրությունը, որից հետո ՆԳ նախարարությունը իրականացնելու է համապատասխան արձագանք:

Խորհրդարանում նշվեց նաեւ, որ համապատասխան նախաձեռնության կիրարկման համար անհրաժեշտ է ստեղծել օրենսդրական բազա, ընդգծվեց, որ քաղաքացիները, ովքեր կտեսագրեն իրավախախտման փաստը, ենթադրաբար, որպես վկա իրավունք ունեն չներկայանալ դատարան:

ՎՐԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆՆ Է ՃՏՊ-ՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁՈՀԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի տրանսպորտի եւ ճանապարհային ասոցիացիայի նախագահ Դավիթ Մեսխիշվիլին, Վրաստանը Եվրոպայում առաջին տեղն է զբաղեցնում ճանապարհատրանսպորտային պատահարների արդյունքում զոհվածների վիճակագրությամբ:

2017 թվականին Վրաստանում գրանցվել էր 2605 ճանապարհատրանսպորտային պատահար, որոնցից 322-ը՝ մահացու ելքով:

Վիճակագրական տվյալներով, 2018 թվականի առաջին երեք ամիսներին տեղի ունեցած պատահարները գերազանցում են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի պատահարների թվին: Այս տարվա անցած ժամանակահատվածում վավերացված 1015 պատահարից 66-ն ավարտվել է մահացու ելքով:

Նշենք, որ, հաշվի առնելով վերոնշյալ տվյալները, Վրաստանի խորհրդարանը դեռեւս անցյալ տարվա գարնանն ընդունեց մի շարք օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման համար պատժամիջոցների խստացմանը: 2017 թվականի հուլիսի 1-ից Վրաստանում ուժի մեջ մտավ տուգանքների հաշվարկման նոր համակարգ՝ վարորդական վկայականի հաշվով տարվա սկզբից հաշվառվում է 100 միավոր, որոնք նվազում են՝ ելնելով կատարած իրավախախտումներից: Մեկ տարվա համար նախատեսված այդ միավորների վաղաժամկետ սպառման դեպքում, վարորդը զրկվում է վարորդական իրավունքից:

Բացի այդ, անցյալ տարվա հուլիսի 1-ից Վրաստանի ճանապարհներին հայտնվել են «գաղտնի» պարեկներ, ՆԳ նախարարությունը տեղեկայել է 3 հազար, այսպես կոչված, «խելացի» տեսախցիկներ: Խցիկները ավտոմատ կարգով, առանց օպերատորի օգնության, կարող են կոնկրետացնել ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումը թույլ տված մեքենան, եւ տուգանք դուրս գրել: